



Կարգապահական գործ թիվ 19182

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2020թ-ի հունիսի 02-ի թիվ 70-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/58-Ա

**ՓԱՍՏԱԲԱՆ ՏԻԳՐԱՆ ԱԹԱՆԵՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ նաև Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Գայանե Դեմիրջյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Տիգրան Խուրշուդյանի, Կարեն Սարգսրյանի և Հարություն Հարությունյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մարիամ Պետրոսյանի,

քննության առնելով փաստաբան Տիգրան Աթանեսյանին (արտոնագիր՝ 78) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Չ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Պալատում 21.08.2019թ. (մուտք՝ թիվ 2497-19) մուտքագրվել է Աղասի Դանիելյանի (**այսուհետ՝ նաև Դիմող**) դիմումը, որով վերջինս հայտնել է, որ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա.Մկրտչյանի վարույթում է քննվում թիվ ԵԴ/4202/02/18 քաղաքացիական գործից առանձնացված թիվ ԵԴ/19367/02/18 քաղաքացիական գործը, որով ինքը հանդես է գալիս, որպես հայցվոր, իսկ փաստաբան Տիգրան Աթանեսյանը (**այսուհետ՝ նաև Պատասխանող**)՝ պատասխանող կողմի ներկայացուցիչ:

Դիմողը նշել է, որ Պատասխանողը ներկայացրել է հայցադիմումի պատասխաններ, որոնցում, ըստ էության նշել է հետևյալը՝

«(...)«Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշում կարող է կայացվել միմիայն սկզբնական հայցի, այլ ոչ թե հայցի առարկան և/կամ հիմքը լրացնելու կամ փոփոխելու մասին փաստաթղթի նկատմամբ, անգամ եթե այն անվանվի

«Հայցադիմում»: Բացի այդ, պարզապես արսուրդի և զավեշտի շարքից է այն, որ 2019 թվականի փետրվարի 07-ին Հայաստանի Հանրապետության որևէ դատավոր կարող է կայացնել «Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշում ղեկավարվելով ուժը կորցրած 1998թ.-ի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, այլ ոչ թե 2018թ.-ի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով: Հարկանշական է, որ «Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշման մեջ դատավոր Ա.Մկրտչյանը հիշատակում է 1998թ.-ի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70 հոդվածի 2-րդ մասը, դրանով իսկ կամա թե ակամա «մատնելով» իրեն հայցվորին հովանավորելու մասով: Օրենքի նշված դրույթն ունի իմպերատիվ բնույթ և ամենևին չկա պահանջ այն հիշատակելու հայցադիմումի լրացումն ընդունելու դեպքում, քանի որ դատարանը պարզապես իրավունք չունի պահանջելու մեծացված հայցապահանջի պետական փութքը դատավարության այդ փուլում, դատարանը զուրկ է հայեցողական լիազորությունից:

(...) Ակնհայտ է, որ հայցոր Ա.Դանիելյանն իրավաբան չէ և նման իբր շարք «խելացի», մի այլ կարգի «ֆոցրած ու իրար թքած-կպցրած» հայցապահանջ ներկայացնելու համար օգտվել է բառիս բուն իմաստով պատուհաս-իրավաբանների ծառայությունից, որոնց մասնագիտական անգրագիտությունը պարզապես չունի սահմաններ:

Այս «Հայցադիմում» կոչվող փաստաթուղթը պետք է որպես «դասական» հակաօրինակ ներկայացվի իրավաբանական ԲՈՒՀ-երի ուսանողներին:

(...) Եվ ի վերջո, ամենակարևորը, ինչը վրիպել են նշել այդ պատուհաս խորհրդատուները, բացարձակապես նշված չէ, թե նշված պայմանագրերով և իրավունքի պետական գրանցմամբ հայցվորի օրենքով պաշտպանվող որ իրավունքը կամ օրինական շահն է խախտվել, որի վերականգմանն էլ պետք է ուղղված լինի ցանկացած հայցապահանջ:

(...) Կարելի է անսպառ սարկազմի առարկա դարձնել «Հայցադիմումի» իրավական «արժեքները», սակայն ակնհայտ է մի բան, որ այդ ամենը չէր կարող վրիպել դատարանի աչքերից և եթե նման հայցապահանջների դեպքում դատարանը բավարարում է հայցի ապահովման միջոց կիրառելու մասին հայցվորի ներկայացրած միջնորդությունը, ապա ակնհայտ է դատարանի ապօրինի վարքագիծը: (...):»:

Դիմողը նշել է նաև, որ ինքը գործարար է, զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ և ՀՀ դատարաններում մի շարք քաղաքացիական գործերով մասնակցել է և ներկայումս էլ մասնակցում է գործերի քննությանը, հանդես է եկել և ներկայումս էլ հանդիսանում է, թե որպես հայցվոր և թե որպես պատասխանող և մի շարք գործերով հաղթել է, որոշ դեպքերում պարտվել է, ներկայումս իր մասնակցությամբ քննվող քաղաքացիական գործերով, այդ թվում և սույն քաղաքացիական գործով չգիտի

կհաղթի, թե կպարտվի, քանի դեռ գործն ըստ էության լուծող կամ վերջնական դատական ակտ չի կայացվել: ՀՀ դատարաններում մի շարք քաղաքացիական գործերի քննությանը մասնակցել է և ներկայումս էլ մասնակցում է անձամբ, իսկ որոշ դեպքերում փաստաբանի կամ փաստաբանների միջոցով: Երկու դեպքում էլ դիմում է վերջիններին, ստանում է խորհրդատվություն այս կամ այն հարցի շուրջ, խորհրդատվությունն ինչպիսին էլ որ լինի և ում կողմից էլ այն տրվի, վերջնական որոշում կայացնում է ինքը: Հետևաբար, թեև պատասխանող կողմի փաստաբան ներկայացուցիչը հայցադիմումի պատասխանում **«պատուհաս խորհրդատուներ»** անվանել է իր փաստաբաններին, սակայն գտնում է, որ վերջինս անհարգալից վերաբերմունք դրսևորել է իր նկատմամբ, քանի որ հայցադիմումը ներկայացվել է իր կողմից:

Դիմողը նշել է նաև, որ ինքը մինչ այս պահը չի լսել, որ որևէ քաղաքացիական գործ կարող է կրել պատասխանող կողմի ներկայացուցչի բնութագրմամբ, «ակնհայտ ապօրինի բնույթ» կամ հայցադիմումը կամ որևէ հայցապահանջ կարող է լինել «անօրինական», քանի որ բոլոր հայցադիմումներն էլ օրինական են, քանի որ հայց հարուցելու իրավունքը տրված է ցանկացած հայցվորի օրենքի ուժով, այլ հարց, որ հարուցված հայցադիմումը կարող է լինել հիմնավոր, անհիմն կամ ակնհայտ անհիմն, հիմնավոր լինելու պարագայում հայցը բավարարվում է, իսկ անհիմն կամ ակնհայտ անհիմն լինելու դեպքում հայցը՝ մերժվում է:

Դիմողը նշել է նաև, որ 2018թ.-ին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի անցումային դրույթներում առկա կարգավորումների ուժով սույն քաղաքացիական գործի նկատմամբ կիրառելի են 1998թ.-ի հունիսի 17-ին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը, քանի որ այն առանձնացվել է թիվ ԵԴ/4202/02/18 քաղաքացիական գործից, իսկ այդ գործը մինչև 2018թ.-ին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքն ուժի մեջ մտնելը, գտնվել է դատարանի վարույթում: Փաստաբան Տիգրան Աթանեսյանը, թեև այդ մասին գիտի ու չնայած դրան, հայցադիմումի պատասխանում նշել է. *«Բացի այդ, պարզապես արսուրդի և զավեշտի շարքից է այն, որ 2019 թվականի փետրվարի 07-ին Հայաստանի Հանրապետության որևէ դատավոր կարող է կայացնել «Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշում ղեկավարվելով ուժը կորցրած 1998թ.-ի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, այլ ոչ թե 2018թ.-ի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով»* և դա այն դեպքում, երբ հայցադիմումի պատասխաններ ներկայացնելուց մոտ մեկ և կես ամիս առաջ՝ 2019թ.-ի փետրվար ամսին, փաստաբան Տիգրան Աթանեսյանը ներկայացրել է կիրառված հայցի ապահովման միջոցները վերացնելու մասին միջնորդություններ և հիմքում դրել է 1998թ.-ի հունիսի 17-ին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի դրույթները և սա «արսուրդի և զավեշտի շարքից է», քանի որ այն

նույնպես հետապնդում է այդօրինակ մանիպուլյացիայով դատարանի վրա ճնշում գործադրելու նպատակ:

Դիմողը հայտնել է նաև, որ Պատասխանողը հայցադիմումի պատասխաններում իրեն որպես նշված քաղաքացիական գործով հայցվորի, վիրավորել է, իսկ դատարանի նկատմամբ դրսևորել է անհարգալից վերաբերմունք, խախտել է օրենքը և փաստաբանի վարքագծի կանոնները, բացի այդ, չունենալով գեթ մեկ փաստ՝ իրեն մեղադրել է նշված գործը քննող դատավորի հետ կապված լինելու, իսկ վերջինիս՝ իրեն հովանավորելու մեջ:

Դիմողը նշել է նաև, որ Պատասխանողը բավականին հաճախ գրեթե անդադար հանդես է գալիս ֆեյսբուքյան իր էջում և ներկայացնում է ինչպես իր նեղ անձնական, կենցաղային, ընտանեկան, ընկերական հարցերը, այնպես և իր վստահորդներին կամ որևէ անձի վերաբերող կամ աշխատանքային հարցեր:

Պատասխանողը, բավականին հաճախ հանդես գալով ֆեյսբուքյան իր էջում կամ մամուլում, վերլուծում է երկրի հասարակական, քաղաքական կյանքը, դատական իշխանությանը, ԲԴԽ-ին, դատարաններին, դատավորներին, փաստաբանների պալատին վերաբերող հարցեր և քննադատում է հասարակական, քաղաքական գործիչներին, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների ներկայացուցիչներին, Պալատին, Պալատի խորհրդին և նախագահին, երբեմն դա անում է բավականին սուր, անտակտ և ուղղակիորեն տարբեր ոլորտները ներկայացնող անձանց վիրավորելով:

23.07.2019թ.-ին ֆեյսբուքյան իր էջում Պատասխանողը գրել է. *«Եթե հնարավոր լիներ դատարանները կոչել մարդկանց անուններով, այսինքն ում են նմանվում իրենց գործունեության էությանը, ապա ես կառաջարկեի վճռաբեկ դատարանը կոչել Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի անունով ... այլ առաջարկներ կան»:*

12.08.2019թ.-ին ֆեյսբուքյան իր էջում Պատասխանողը գրել է. *«Մինչև վճռաբեկ դատարանի շենքը հիմնովին չքանդեն, տեղը մի հասարակական հուշարձան չդնեն, էս երկրում ոչինչ չի փոխվելու (ներդրում չի լինելու, մարդու իրավունքը չի հարգվելու և այլն)»:*

Իսկ 16.08.2019թ.-ին ֆեյսբուքյան իր էջում Պատասխանողը գրել է. *«Մարտի 12-ը կամ մայիսի 19-ն առաջարկում եմ հռչակել ՀՀ վճռաբեկ դատարանի օր: Կարող եք գուշակել, ինչու հենց այդ օրերից մեկը?» և ինքն էլ մեկնաբանություններում այդ հարցին պատասխանել է նշելով, որ. «Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի ծննդյան օրերն են»:*

Դիմողը նշել է, որ խոսելով ՀՀ վճռաբեկ դատարանի «զոհերի» մասին, այդ աստիճանի անհարգալից վերաբերմունք է դրսևորում դատարանների, իսկ կոնկրետ այս դեպքում ՀՀ վճռաբեկ դատարանի նկատմամբ:

Դիմողը խնդրել է Պատասխանողի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ օրենքով նախատեսված ընթացակարգերին համապատասխան:

Դիմողը դիմումին կից ներկայացրել է Պատասխանողի կողմից դատարանին ներկայացված հայցադիմումի պատասխանների պատճենները:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի 23.09.2019թ. թիվ 376-Ա/ԿԳ-19182 որոշման հիման վրա փաստաբան Տիգրան Աթանեսյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Պալատի փաստաբանների ընդհանուր ժողովի 11.12.2012թ. թիվ 1/4 որոշմամբ հաստատված խմբագրությամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ նաև Կանոնագիրք**) 2.2.2 և 2.2.3 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

30.09.2019թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Ռիմա Մխիթարյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը ներկայացրել է բացատրություն, որով վերահաստատել է իր դիմումում նշված դիրքորոշումը:

Դիմողը, թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Գործի նախապատրաստման ընթացքում Պատասխանողը բացատրություն չի ներկայացրել:

Պատասխանողը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 17.11.2019թ. կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ Պատասխանողն առարկություն չի ներկայացրել:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ Պալատում 03.12.2019թ. և 25.12.2019թ. մուտքագրվել են Դիմողի երկու առարկությունները:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 03.12.2019:
Խորհրդի նիստը տեղի է ունեցել 02.06.2020թ. ժամը 19:00-ին, Պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 3.10.3 ենթակետի համաձայն՝ Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

- Պատասխանողը հանդիսանում է թիվ ԵԴ/19367/02/18 քաղաքացիական գործով համապատասխանողներ Վլադիմիր Սերգեյի, Վլադիմիր Վլադիմիրի և Սուսաննա Համլետի Գասպարյանների և Էմիլ Կազբեկի Զուլյանի ներկայացուցիչը,

- Պատասխանողը ներկայացրել է հայցադիմումի երկու պատասխան՝ մեկը Վլադիմիր Սերգեյի, Վլադիմիր Վլադիմիրի և Սուսաննա Համլետի Գասպարյանների անունից, իսկ մյուսը՝ Էմիլ Կազբեկի Զուլյանի անունից, որոնցում, ըստ էության, օգտագործել է հետևյալ արտահայտությունները՝

«(...)«Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշում կարող է կայացվել միմիայն սկզբնական հայցի, այլ ոչ թե հայցի առարկան և/կամ հիմքը լրացնելու կամ փոփոխելու մասին փաստաթղթի նկատմամբ, անգամ եթե այն անվանվի «Հայցադիմում»: Բացի այդ, պարզապես արքունիքի և զավեշտի շարքից է այն, որ 2019 թվականի փետրվարի 07-ին Հայաստանի Հանրապետության որևէ դատավոր կարող է կայացնել «Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշում ղեկավարվելով ուժը կորցրած 1998թ.-ի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, այլ ոչ թե 2018թ.-ի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով: Հարկանշական է, որ «Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշման մեջ դատավոր Ա.Մկրտչյանը հիշատակում է 1998թ.-ի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70 հոդվածի 2-րդ մասը, դրանով իսկ կամա թե ակամա «մատնելով» իրեն հայցվորին հովանավորելու մասով: Օրենքի նշված դրույթն ունի իմպերատիվ բնույթ և ամենևին չկա պահանջ այն հիշատակելու հայցադիմումի լրացումն ընդունելու դեպքում, քանի որ դատարանը պարզապես իրավունք չունի պահանջելու մեծացված հայցապահանջի

պետական փուրքը դատավարության այդ փուլում, դատարանը զուրկ է հայեցողական լիազորությունից:

(...) Ակնհայտ է, որ հայցոր Ա.Դանիելյանն իրավաբան չէ և նման իբր շափ «խելացի», մի այլ կարգի «ֆոցրած ու իրար թքած-կպցրած» հայցապահանջ ներկայացնելու համար օգտվել է բառիս բուն իմաստով պատուհաս-իրավաբանների ծառայությունից, որոնց մասնագիտական անգրագիտությունը պարզապես չունի սահմաններ:

Այս «Հայցադիմում» կոչվող փաստաթուղթը պետք է որպես «դասական» հակաօրինակ ներկայացվի իրավաբանական ԲՈՒՀ-երի ուսանողներին:

(...) Եվ ի վերջո, ամենակարևորը, ինչը վրիպել են նշել այդ պատուհաս խորհրդատուները, բացարձակապես նշված չէ, թե նշված պայմանագրերով և իրավունքի պետական գրանցմամբ հայցվորի օրենքով պաշտպանվող որ իրավունքը կամ օրինական շահն է խախտվել, որի վերականգմանն էլ պետք է ուղղված լինի ցանկացած հայցապահանջ:

(...)Կարելի է անսպառ սարկազմի առարկա դարձնել «Հայցադիմումի» իրավական «արժեքները», սակայն ակնհայտ է մի բան, որ այդ ամենը չէր կարող վրիպել դատարանի աչքերից և եթե նման հայցապահանջների դեպքում դատարանը բավարարում է հայցի ապահովման միջոց կիրառելու մասին հայցվորի ներկայացրած միջնորդությունը, ապա ակնհայտ է դատարանի ապօրինի վարքագիծը: (...):»:

Նշված փաստերը հաստատվում են գործում առկա ապացույցներով, այդ թվում Դիմողի դիմումով և հայցադիմումի պատասխաններով:

6. Պատասխանողի անձր բնութագրող հանգամանքները.

Պալատի աշխատակազմի ղեկավարի տեղակալի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Տիգրան Աթանեսյանը փաստաբանական գործունեության արտոնագիրն ստացել է 15.03.2001թ. և 2017-2020թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ հարուցվել է 13 կարգապահական վարույթ (1 ընթացիկ և 12 ավատված վարույթներ)՝ չհաշված սույն կարգապահական վարույթը:

Խորհրդի 25.05.2017թ. թիվ ԿԳ/55-Ա որոշմամբ Տիգրան Աթանեսյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ տուգանքի՝ 150.000 ՀՀ դրամի չափով և լրացուցիչ տույժի՝ իր հաշվին մասնակցության 8 ժամ լրացուցիչ վերապատրաստման դասընթացների՝ որոշման ընդունման պահին գործող ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի 11.02.2012թ. թիվ 1/4 որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրի

(այսուհետ՝ Կանոնագիրք) 2.7.2 և 3.1.8 ենթակետերի խախտման համար, և որոշումը բողոքարկվել է դատական կարգով:

Խորհրդի 17.10.2017թ. թիվ ԿԳ/94-Ա որոշմամբ Տիգրան Աթանեսյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ տուգանքի՝ 100.000 ՀՀ դրամի չափով և լրացուցիչ տույժի՝ իր հաշվին մասնակցության 8 ժամ լրացուցիչ Կանոնագրքի 2.2.3, 5.1.2 և 5.2.1 (1) ենթակետերի խախտման համար, և որոշումը բողոքարկվել է դատական կարգով:

Խորհրդի 17.01.2018թ. թիվ ԿԳ/02-Ա որոշմամբ Տիգրան Աթանեսյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ նկատողության վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու համար, և որոշումը բողոքարկվել է դատական կարգով:

Խորհրդի 07.07.2018թ. թիվ ԿԳ/101-Ա որոշմամբ Տիգրան Աթանեսյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ խիստ նկատողության վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու համար, և որոշումը բողոքարկվել է դատական կարգով:

Խորհրդի 11.08.2018թ. թիվ ԿԳ/191-Ա որոշմամբ Տիգրան Աթանեսյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ խիստ նկատողության Կանոնագրքի 2.2.3 ենթակետի խախտման համար, և որոշումը բողոքարկվել է դատական կարգով:

Խորհրդի 11.08.2018թ. թիվ ԿԳ/192-Ա որոշմամբ Տիգրան Աթանեսյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ խիստ նկատողության Կանոնագրքի 2.2.3 ենթակետի խախտման համար, և որոշումը բողոքարկվել է դատական կարգով:

Խորհրդի 11.08.2018թ. թիվ ԿԳ/195-Ա որոշմամբ Տիգրան Աթանեսյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցման Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Կանոնագրքի 2.2.3 ենթակետի խախտման համար, և որոշումը բողոքարկվել է դատական կարգով:

Խորհրդի 13.02.2019թ. թիվ ԿԳ/32-Ա որոշմամբ Տիգրան Աթանեսյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ 10.000 ՀՀ դրամ տուգանքի վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու համար, և որոշումը բողոքարկվել է դատական կարգով:

Խորհրդի 11.06.2019թ. թիվ ԿԳ/87-Ա որոշմամբ Տիգրան Աթանեսյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ նկատողության անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար, և որոշումը բողոքարկվել է դատական կարգով:

Խորհրդի 14.01.2020թ. թիվ ԿԳ/02-Ա որոշմամբ Տիգրան Աթանեսյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ նկատողության և լրացուցիչ կարգապահական տույժի՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցության՝ «Դեոնթոլոգիա» թեմայով, 4 (չորս) ակադեմիական ժամ ժամաքանակով «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, Կանոնագրքի 2.2.3 ենթակետի և 4.1 կետի պահանջների խախտման համար, և որոշումը բողոքարկվել է դատական կարգով:

Խորհրդի 25.02.2020թ. թիվ ԿԳ/53-Ա և 30.10.2019թ. թիվ 463-Ա/ԿԳ-19235 որոշումներով Տիգրան Աթանեսյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթները կարճվել են:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Տիգրան Աթանեսյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Կանոնագրքի 2.2.3 ենթակետի խախտման համար, իսկ Կանոնագրքի 2.2.2 ենթակետի խախտման մասով կարգապահական վարույթը ենթակա կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ:

7.1 Կանոնագրքի 2.2.3 ենթակետի խախտման մասով

Կանոնագրքի 2.2.3 ենթակետի համաձայն՝ մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Կանոնագրքի նշված իրավադրույթի խախտման փաստը պարզելու համար Խորհուրդն անհրաժեշտ է համարում պատասխանել հետևյալ հարցադրումներին՝

- արդյո՞ք Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը և արդյո՞ք այդ սահմանափակումը կարող է դիտարկվել «օրենքով նախատեսված սահմանափակման» համատեքստում.

- արդյո՞ք խախտվել է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի և Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջները.

- արդյո՞ք փաստաբանի կողմից կարծիքի հրապարակային արտահայտումը գտնվում է միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի կարգավորումների շրջանակներում.

- արդյո՞ք Պատասխանողն իր գործունեությամբ չի նպաստել մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

7.1.1. Արդյո՞ք Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը և արդյո՞ք այդ սահմանափակումը կարող է դիտարկվել «օրենքով նախատեսված սահմանափակման» համատեքստում:

Խորհուրդը գտնում է, որ Կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը, և այդ սահմանափակումը պետք է դիտարկվել որպես օրենքով նախատեսված սահմանափակում՝ հետևյալ

պատճառաբանությամբ:

Տվյալ դեպքում նախ և առաջ անհրաժեշտ է հասկանալ, թե արդյոք Փաստաբանի վարքագծի կանոնադրքով նախատեսված փաստաբանի ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումները դիտվում են «**օրենքով նախատեսված սահմանափակման**» համատեքստում, թե՛ ոչ:

KINCSES v. HUNGARY գործով 27.01.2015թ. որոշմամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ **դիմողի արտահայտվելու ազատությանը միջամտությունը հիմնված է 1998 թվականի թիվ 11 ակտի՝ 37ա և 38 հոդվածների վրա, հետևաբար՝ նախատեսված է եղել օրենքով՝**

Հունգարիայի փաստաբանության վերաբերյալ օրենքի (թիվ 11 ակտի) 37ա հոդվածի համաձայն՝ *փաստաբանի կողմից կարգապահական խախտումը համարվում է կատարված, եթե նա խախտել է փաստաբանի էթիկայի նորմերով նախատեսված պարտավորությունները:*

Նշված օրենքի 38-րդ հոդվածը սահմանում է Հունգարիայի փաստաբանների պալատի կողմից կիրառվող կարգապահական տույժերի տեսակները:

Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հունգարիայի փաստաբանը փաստաբանական պալատի կողմից կարգապահական պատասխանատվության էր ենթարկվել Փաստաբանների էթիկայի կանոնների 12.1 և 15.2 կետերի խախտման համար, ապա **միանշանակ կարելի է փաստել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ փաստաբանի արտահայտվելու իրավունքի սահմանափակման վերաբերյալ դրույթները, որոնք սահմանված են փաստաբանների էթիկայի նորմերով, Կոնվենցիայի տեսանկյունից հավասարեցվում են օրենքով նախատեսված սահմանափակումներին:**

Նույն կերպ պետք է ընկալել Պալատի կողմից հաստատված փաստաբանի վարքագծի կանոնադրքով նախատեսված կարգավորումները, քանի որ Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պարտասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնադրքի պահանջները խախտելու համար.....*

7.1.2. Արդյո՞ք խախտվել է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի և Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջները, սույն կարգապահական գործով:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պարվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Այդպիսի կարգավորում ունի նաև Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ *այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պարտասխանատվության հետ, կարող է պայմանավորվել*

¹ Հունգարիայի փաստաբանության վերաբերյալ օրենք:

² Տե՛ս KINCSES v. HUNGARY 27.01.2015 (no. 66232/10, § 27)

այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պարտամիջոցներով, **որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում**³ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, մեկնաբանելով համացանցում արտահայտվելու ազատության պաշտպանության շրջանակների հարցը, նշել է, որ անձի արժանապատվության նկատմամբ ոտնձգությունը կարող է արտահայտվելու ազատության իրավունքի պաշտպանության շրջանակից դուրս լինել, եթե դա անիմաստ վիրավորանք է, օրինակ՝ երբ վիրավորական հայտարարության միակ նպատակը անձին վիրավորելն է:³

Կարևոր է պարզել, թե Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի լույսի ներքո արդյոք փաստաբանի վարքագծի սահմանափակումը եղել է իրավաչափ, թե՛ ոչ:

ա) Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի, 19-րդ հոդվածի 2-րդ կետի, 27-րդ հոդվածի և 39-րդ հոդվածի համաձայն, հաշվի առնելով KINCSES v. HUNGARY գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 27.01.2015թ. որոշմամբ⁴ արտահայտած իրավական դիրքորոշումները, Փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված սահմանափակումներն ամբողջությամբ ներառվում են Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված **«որոնք նախատեսված են օրենքով»** հասկացության մեջ:

Եվրոպական դատարանի նշված գործով փաստական հանգամանքները նույնական են, այնքանով, որքանով՝ KINCSES v. HUNGARY գործով դիմողը փաստաբան է և վերջինիս պատասխանատվության է ենթարկել փաստաբանական պալատն արտահայտվելու համար՝ փաստաբանի էթիկայի կանոնների խախտման հիմքով: Հունգարիայի փաստաբանության վերաբերյալ օրենսդրությունը էթիկայի կանոնների մասով նույնպես վկայակոչող (բլանկետային) է և հղում է կատարում արդեն փաստաբանական պալատի սահմանած էթիկայի կանոններին:

բ) Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի մյուս կարևոր պայմանն այն է, թե արդյոք Պալատը, փաստաբանի արտահայտվելու ազատությունը Կանոնագրքով սահմանափակելով, իրավաչափ նպատակ է հետապնդել պաշտպանելու այլ անձանց հեղինակությունը, թե՛ ոչ: Նշվածը պարզելու համար նախ պետք է մեջբերել Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերը, այն է՝ Փաստաբանների պալատի խնդիրներն են՝ 4) *վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից*

³ CASE OF MAGYAR TARTALOMSZOLGÁLTATÓK EGYESÜLETE AND INDEX.HU ZRT-ն ընդդեմ Հունգարիայի, թիվ 22947/13, 02/02/2016, § 76:

⁴ Տես՝ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մաս

փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման նկատմամբ. 5) միջոցներ ձեռնարկել **փաստաբանության հեղինակության բարձրացման ուղղությամբ**: Փաստաբանության հասկացությունը սահմանված է նույն օրենքի 3-րդ հոդվածում, որի համաձայն՝ Փաստաբանությունը **փաստաբանների մասնագիտական միավորում է**, որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ:

Նշված իրավական նորմերի վերլուծությունից միանշանակ պարզ է դառնում, որ Պալատի խնդիրներից է բարձր պահել ՀՀ բոլոր փաստաբանների միավորման արդյունքում ձևավորված կառույցի հեղինակությունը, և հետևաբար, Պալատի մարմին հանդիսացող Պալատի խորհրդի կողմից այն փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելը, որը խախտել է Կանոնագրքի համապատասխան պահանջը՝ դրանով իսկ բացասաբար ազդելով բոլոր փաստաբանների հավաքական միավորում հանդիսացող փաստաբանության հեղինակության վրա:

գ) Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի մյուս կարևոր պայմանն այն է, թե արդյոք ժողովրդավարական հասարակության համար նման միջամտությունն անհրաժեշտ էր և հետևաբար, արդյո՞ք պահպանվել էր այն հավասարակշռությունը մի կողմից փաստաբանության հեղինակության պաշտպանության, և մյուս կողմից անձի արտահայտվելու ազատության սահմանափակման միջև: Այս հարցին անդրադառնալու համար նախ և առաջ անհրաժեշտ է անդրադառնալ հասարակությունում փաստաբանության դերին և նշանակությանը:

Այսպես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումների համաձայն՝ *փաստաբաններն իրենց հատուկ կարգավիճակով պայմանավորված՝ որպես միջնորդ, կենտրոնական դիրք են զբաղեցնում հանրության և դատարանների միջև արդարադատության իրականացման գործընթացում*: Նման կարգավիճակով է բացատրվում նրանց վարքագծի նկատմամբ սովորաբար կիրառվող սահմանափակումները որպես փաստաբանական միության անդամ⁵:

Կանոնագրքի 1.1 ենթակետի համաձայն՝ իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանը կոչված է ծառայել արդարադատության շահերին, ինչպես նաև այն իրավունքներին ու արտոնություններին, որոնք նրան վստահել են պաշտպանելու իր վստահորդի շահերը:

Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության համար:

Կանոնագրքի 1.2 ենթակետի համաձայն՝ մասնագիտական գործունեության սկզբունքները ձևավորվել են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից, երաշխավորելու փաստաբանի պարզաճ գործունեությունը, ինչին

⁵ St' u Casado Coca v. Spain գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, 24.02.1994թ. վճիռը (§ 54):

բոլոր քաղաքակիրթ հասարակությունները կարևոր նշանակություն են տալիս: Սկզբունքների ձևավորման համար կարևոր նշանակություն են ունեցել Հայաստանի Հանրապետության փաստաբանների կողմից ձևավորված ավանդույթները, ինչպես նաև **Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի⁶ կողմից սահմանած «Եվրոպայի փաստաբանների համար վարքագծի կանոնագրքի» դրույթները:**

Պալատի կանոնադրության 2.2 կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ փաստաբանների պալատը հետապնդում է նաև հետևյալ նպատակները և խնդիրները՝ **նպաստել** Հայաստանի Հանրապետության լիակատար ինտեգրմանը եվրոպական կառույցներում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության ներդաշնակեցմանը եվրոպական չափանիշներին, **Եվրոպական իրավական սրանդարտների և ավանդույթների արմատավորմանը:**

Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (այսուհետ՝ նաև CCBE) կողմից հաստատված եվրոպական իրավական մասնագիտության հիմնական սկզբունքների վերաբերյալ կոմենտարների «դ» կետի համաձայն՝ փաստաբանը, որպեսզի հարգվի իր վստահորդների, երրորդ անձանց, դատարանների և պետության կողմից, պարտավոր է արժանանալ այդ հարգանքին: Դա հնարավոր է անդամագրվելով հեղինակային մասնագիտությանը. հետևաբար, փաստաբանը չպետք է անի այն ամենը, ինչը կարող է հեղինակագրել ինքն իրեն կամ առհասարակ փաստաբանությանը, որպես մասնագիտություն, կամ թուլացնել տվյալ մասնագիտության նկատմամբ հասարակության վստահությունը: Դա չի նշանակում, որ փաստաբանը պետք է լինի կատարյալ անձնավորություն, բայց դա նշանակում է, որ նա չպետք է ցուցաբերի ոչ հարիր վարքագիծ, թե փաստաբանություն, թե այլ տեսակի գործունեություն իրականացնելիս, թե նույնիսկ մասնավոր կյանքում, որով հնարավոր է որ վարկաբեկվի տվյալ մասնագիտությունը⁷:

ՀՀ սահմանադրական դատարանի 2016թ. ապրիլի 5-ի թիվ ՍԴՈ-1263 որոշմամբ դատարանը նշել է. «Ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ ի տարբերություն 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի, որի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթով սահմանված էր իրավաբանական օգնություն սրանալու իրավունքը, 2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածը, որը վերաբերում է դիտարկվող իրավունքին, պարունակում է 2-րդ մաս, որի 1-ին նախադասությամբ ամրագրված է հետևյալ դրույթը. “Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը»: Դրանով իսկ պետությունն ընդլայնել է որակյալ իրավաբանական օգնություն ցուցաբերելու իր պոզիտիվ պարտականության շրջանակները **սահմանադրական մակարդակի բարձրացնելով փաստաբանության որպես որակյալ իրավաբանական օգնություն տրամադրող ինստիտուտի դերը:**»:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ կշեռքի մի նժարի վրա

⁷ Տե՛ս CCBE A Commentary on the Charter of Core Principles of the European Legal Profession

դրված է փաստաբանի արտահայտվելու ազատությունը, իսկ մյուս նժարի վրա՝ փաստաբանությունը, որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտ, որին Սահմանադրությամբ վերապահվել է պետության կողմից երաշխավորված անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ապահովումը: Փաստաբանության հեղինակությունը, մի համայնքի հեղինակություն է, որին անդամագրված են արդարադատության իրականացման գործընթացում հասարակության և դատարանի միջև միջնորդ հանդիսացող փաստաբանները, համայնքի, որի բարձր հեղինակությունից է նաև կախված յուրաքանչյուր փաստաբանի հեղինակությունը պետական մարմինների, դատարանների և այլ անձանց հետ հարաբերվելիս:

Այս տեսանկյունից, բնականաբար, արդարացված և հավասարակշռված է փաստաբանի արտահայտվելու ազատության սահմանափակումը, որն ուղղված է մյուս բոլոր փաստաբանների և առհասարակ փաստաբանության հեղինակության բարձրացմանը: Նման սահմանափակումն անհրաժեշտ է հասարակության համար:

7.1.3 Արդյո՞ք փաստաբանի կողմից կարծիքի հրապարակային արտահայտումը գտնվում է միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի կարգավորումների շրջանակներում.

Քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

Քաղաքացիական իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պարվի ու բարի համբավի պաշտպանության համար:

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար.....:

Վերը հիշատակված նորմերից հետևում է, որ Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի և Կանոնագրքի կարգավորման առարկան տարբերվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածով կարգավորվող առարկայից:

Օրենսգրքի 1087.1 հոդվածը պաշտպանում է անձի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը, իսկ Կանոնագիրքը պաշտպանում է փաստաբանության՝ որպես մասնագիտական միավորման հեղինակությունը, անկախությունը և օրինապահությունը:

Կանոնագրքի պահանջի խախտման համար փաստաբանի պատասխանատվություն կրելը չի լուծում կարգապահական վարույթով դիմողի մասնավոր շահի պաշտպանության հարցը: Օրինակ՝ եթե փաստաբանը պայմանագրով նախատեսված հոնորարի այն մասը, որի համար ծառայություն չի մատուցել,

պայմանագիրը լուծելուց հետո չի վերադարձնում վստահորդին, ապա նա խախտում է Կանոնագրքի պահանջը, սակայն փաստաբանի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու արդյունքում նրա վստահորդի մոտ չի ավելանում փաստաբանի կողմից վճարման ենթակա գումարը: Ի վերջո, գումարի վերադարձման համար վստահորդը պետք է դիմի դատարան:

Հետևաբար, Խորհուրդը գտնում է, որ կարող է քննարկել՝ Պատասխանողի արարքը Կանոնագրքի պահանջներին հակասելու հարցը:

7.1.4 արդյո՞ք Պատասխանողն իր գործունեությամբ չի նպաստել մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Օրենքի 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

Կանոնագրքի 2.2.3 ենթակետի համաձայն՝ մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Կանոնագրքի 2.2.3 ենթակետով փաստաբանի վրա դրվում է համակողմանի պարտականություն իր գործունեության բոլոր բնագավառներում նպաստել փաստաբանության մասնագիտական բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը: Սույն պարտականությունն ունի ինչպես պոզիտիվ, այնպես էլ նեգատիվ դրսևորում: Առաջին դեպքում ենթադրվում է փաստաբանի կողմից որոշակի ակտիվ գործողությունների կատարում սեփական մասնագիտական և անձնական վարկանիշի բարձրացման ուղղությամբ՝ այդպիսով իր նպաստը բերելով փաստաբանի մասնագիտության հանրային վարկանիշի բարձրացմանը: Նեգատիվ պարտականությունը փաստաբանի պատշաճ վարքագծի նվազագույն շեմն է, երբ փաստաբանից պահանջվում է առնվազն չկատարել հանրորեն պարսավելի, անպարկեշտ, հակաօրինական և փաստաբանի մասնագիտության հանրային վարկը խաթարող գործողություն կամ անգործություն:

Փաստաբանի վարքի նկատմամբ հարաբերականորեն խիստ սահմանափակումները պայմանավորված են փաստաբանի մասնագիտության առանձնահատուկ բնույթով և հանրային բարձր կարգավիճակով, որը պայմանավորված է փաստաբանության՝ որպես իրավապաշտպան գործունեության մեծ կարևորությամբ: Փաստաբանը հանդիսանում է հասարակության հատուկ սուբյեկտ, ով ստանձնել է իր առանձնահատուկ դերը՝ իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի շնորհիվ և որպես իրավապաշտպան գործունեություն իրականացնող սուբյեկտ կոչված է նպաստելու արդարադատության իրականացմանը: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն վստահորդների հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանի մասնագիտական

գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության ընկալման համար:

Սույնի համատեքստում փաստաբանի վրա են դրվում բազմազան իրավական և բարոյական պարտավորություններ, և նրա նկատմամբ գործում են առանձնահատուկ պահանջներ՝ կապված անձնական վարքագծի հետ. լինի դա մասնագիտական գործունեության, թե այլ ոլորտներում: Ուստի՝ փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ, այլ ընդգրկում են նրա մասնագիտական-իրավական և բարոյական օրինակելիության բարձր չափանիշներ միջանձնային և հասարակական ամենատարբեր շփումների և առնչությունների ժամանակ: Փաստաբանի՝ որպես անհատի գործունեությունը հասարակության կողմից ասոցացվում է փաստաբանի ինստիտուտի հետ ընդհանրապես, ուստի և՛ փաստաբանն իր առօրյա գործունեության իրականացման ընթացքում պետք է դրևսորի այնպիսի վարքագիծ, որը կնպաստի փաստաբանի կոչման և առաքելության նկատմամբ հարգանքի և վստահության բարձրացմանը, ինչը փաստաբանի բարոյական պարտավորությունն է: Փաստաբանի օրինակելի վարքագծի կարևորագույն դրսևորումներից է իր գործընկերների և այլ անձանց անձի, արժանապատվության և համբավի նկատմամբ հարգալից վերաբերմունք դրսևորելը, միջանձնային քաղաքավարի վարվեցողությունը:

Տվյալ պարագայում Պատասխանողն իր վստահորդների գործով դատարանին ներկայացրել է հայցադիմումի երկու պատասխան, որոնցում օգտագործել է հետևյալ արտահայտությունները. «*ակնհայտ է, որ հայցոր Ա.Դանիելյանն իրավաբան չէ և նման իբր շատ «խելացի», մի այլ կարգի «ֆոցրած ու իրար թքած-կպցրած» հայցապահանջ ներկայացնելու համար օգտվել է բառիս բուն իմաստով պատուհաս-իրավաբանների ծառայությունից, որոնց մասնագիտական անգրագիտությունը պարզապես չունի սահմաններ:*» և «*Հարկանշական է, որ «Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշման մեջ դատավոր Ա.Մկրտչյանը հիշատակում է 1998թ.-ի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70 հոդվածի 2-րդ մասը, դրանով իսկ կամա թե ակամա «մատնելով» իրեն հայցվորին հովանավորելու մասով:*»:

Պատասխանողի կողմից ներկայացված հայցադիմումի պատասխաններում տեղ գտած վերոնշյալ արտահայտություններից հետևում է, որ Պատասխանողի կողմից, ըստ էության, սահմանազանցվել է վստահորդի իրավունքներն ու օրինական շահերն Օրենքով և Կանոնագրքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու փաստաբանի իրավունքը, քանի որ այդ արտահայտությունները վերաբերում են նախագահող դատավորի անձին և Դիմողի իրավաբաններին, իրենցից ներկայացնում են բացառապես սուբյեկտիվ դատողություններ, պարունակում են նաև խոսակցական բնույթի և նախագահող դատավորի հեղինակությունը նսեմացնող դիրքորոշումներ:

Փաստաբան Տիգրան Աթանեսյանը դատավարական հակառակորդ կողմի ներկայացուցիչներին անվանում է պատուհաս-իրավաբաններ, դրանով իսկ ծաղրելով դատավարական հակառակորդ կողմին:

Փաստաբանի նման վարքագիծն անհարիր է իրավական պետությունում իրավապաշտպան գործառույթ իրականացնող անձին և չի նպաստում փաստաբանության ինստիտուտի և փաստաբանի մասնագիտության հանրային հեղինակության ամրապնդմանը, փոխարենը՝ ստվերում է այն:

Պատասխանողի կողմից դատավարական փաստաթղթերում նման դատադրությունների և բառապաշարի օգտագործումը կասկածի տակ է դնում փաստաբանի մասնագիտական և հանրային հեղինակությունը և հարիր չէ փաստաբանին:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի կողմից խախտվել են Կանոնագրքի 2.2.3 ենթակետի պահանջները:

«Վ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի 19.10.2019թ. թիվ 1-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Նոր կանոնագիրք**) 10.4 կետի համաձայն՝ *այն դեպքում, երբ կարգապահական վարույթը հարուցվել է նախորդ խմբագրությամբ Կանոնագրքի կետի կամ ենթակետի հիմքով, իսկ նոր խմբագրությամբ Կանոնագիրքը նույն արարքը համարում է խախտում, ապա Պալատի խորհուրդը փաստաբանին պատասխանատվության ենթարկելու հարցը լուծում է նախորդ խմբագրությամբ Կանոնագրքի համապատասխան կետով կամ ենթակետով:*

Նոր կանոնագրքի 2.2.2 ենթակետի համաձայն՝ *մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական կամ այլ բնագավառում (ոլորտում) փաստաբանը պետք է խուսափի այնպիսի վարքագծից (գործողությունից կամ անգործությունից), որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:*

Փաստաբան Տիգրան Աթանեսյանի վերոհիշյալ արարքը Նոր կանոնագրքի 2.2.2 ենթակետի իմաստով նույնպես խախտում է համարվում, հետևապես Տիգրան Աթանեսյանի արարքը պետք է որակվի Նոր կանոնագրքի 10.4 կետի համաձայն՝ Կանոնագրքի (2012թ.) 2.2.3 ենթակետով:

7.2 Կանոնագրքի 2.2.2 ենթակետի մասով

Կանոնագրքի 2.2.2 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը չպետք է կատարի այնպիսի գործողություններ, որոնք կարող են կասկածի տակ դնել նրա հեղինակությունը, ազնվությունը և անձեռնմխելիությունը (հակառակորդ կողմի առաջարկների հանդեպ մատչելիություն):*

Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի վարքագծում Կանոնագրքի նշյալ

ենթակետով նախատեսված արարքի հատկանիշները բացակայում են և չեն հիմնավորվել գործում առկա նյութերով:

7.3. Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի մասով

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Օրենքի 19-րդ հոդվածի վերոնշյալ նորմը փաստաբանի վարքագծի իրավաչափությունը գնահատելիս հղում է անում Կանոնագրքի իրավադրույթներին:

Այսինքն՝ Պատասխանողի կողմից Օրենքի նշյալ իրավադրույթի խախտման հանգամանքն ուղղակիորեն կապվում է Կանոնագրքի շրջանակներում Պատասխանողի վարքագծի գնահատման հետ: Հետևաբար, Կանոնագրքի խախտումը հանգեցնում է նաև Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի խախտմանը:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի կողմից Կանոնագրքի 2.2.3 ենթակետի խախտումը հանգեցնում է նաև Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի խախտմանը:

Կարգապահական տույժի ընտրությունը.

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝

- 1) նկատողություն.
- 2) խիստ նկատողություն.
- 3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների
- 4) տուգանք
- 5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև փաստաբան Տիգրան Աթանեսյանի անձը բնութագրող հանգամանքները, ինչից ելնելով Տիգրան Աթանեսյանի նկատմամբ կիրառում է խիստ նկատողությունը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց '

1. Փաստաբան Տիգրան Աթանեսյանին (արտոնագիր՝ թիվ 78) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Պալատի փաստաբանների ընդհանուր ժողովի 11.12.2012թ. թիվ 1/4 որոշմամբ հաստատված խմբագրությամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.3 ենթակետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Տիգրան Աթանեսյանի նկատմամբ (արտոնագիր՝ թիվ 78) կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն:

3. Պալատի նախագահի 23.09.2019թ. թիվ 376-Ա/ԿԳ-19182 որոշման հիման վրա փաստաբան Տիգրան Աթանեսյանի (արտոնագիր՝ թիվ 78) նկատմամբ Պալատի փաստաբանների ընդհանուր ժողովի 11.12.2012թ. թիվ 1/4 որոշմամբ հաստատված խմբագրությամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.2 ենթակետի խախտման հարկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճել:

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Դիմողին և փաստաբան Տիգրան Աթանեսյանին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Գայանե Դեմիրջյան

**02 հունիսի 2020թ.
թիվ ԿԳ/58-Ա
ք. Երևան**